

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ մարզային ենթակայության՝ առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայության՝ **«Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն»**, **«Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա»**, **«Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն»**, **«Վերիշենի բժշկական ամբուլատորիա»** և **«Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն»** ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Մրցույթի մասնակցելու և տնօրենի ընտրության պարտադիր պայման է թեկնածուի 65 տարին չլրանալը

- 1) բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ (թերապիա) կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ,
- 2) առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ,
- 3) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՊՈԱԿ-ների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
- 4) կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն,
- 5) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝
  - ա. ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման,
  - բ. անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման,
  - գ. աշխատանքների բաշխման,
  - դ. կարգապահական պատասխանատվության,
  - ե. խարխուսանքի միջոցների կիրառման,
- 6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- 7) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ,
- 8) բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում,
- 9) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- 10) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,
- 11) օտար լեզվի իմացություն:

**«Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի** տնօրենի մրցույթը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 29-ին, ժամը 10:30-ին,

**«Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի** տնօրենի մրցույթը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 29-ին, ժամը 14:00-ին,

**«Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի** տնօրենի մրցույթը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 29-ին, ժամը 16:30-ին,

**«Վերիշենի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի** տնօրենի մրցույթը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 30-ին, ժամը 10:30-ին,

**«Խնձորեսկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի** տնօրենի մրցույթը կանցկացվի 2021 թվականի ապրիլի 30-ին, ժամը 14:00-ին:

• Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան են ներկայացնում՝

- 1) դիմում.
- 2) մեկ լուսանկար 3 x 4 չափսի.
- 3) քաղվածք՝ աշխատանքային գրքուկից.
- 4) ինքնակենսագրություն.
- 5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- 6) քաղաքացու ցանկությամբ՝ հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.
- 7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).
- 8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

• Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9<sup>00</sup>-12<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2021 թվականի մարտի 19-ը:**

Մրցույթը կկայանա Սյունիքի մարզպետարանի շենքում (ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ.Նժդեհ 1 շենք հասցեով):

***Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարան (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ.Նժդեհ 1 շենք, Անձնակազմի կառավարման բաժին, հեռ.՝ (0285) 4-42-75, հարցաշարին ծանոթանալու համար՝ հեռ. (0285) 4-35-10):***